

ձեր հաւատի մէջ եւ բարի վարք կը սովորեցընէ: Ղրա հետ եւ մեր Հայկազեան լեզուն, որ ձեր սեփական լեզուն է, որովհետեւ դուք ծընունել էք հայ, եւ պարտաւոր էք իմանալ ձեր լեզուն: Երդումով առում եմ ձեզ, որ եթէ, Տէ՛րը մի՛ արասցէ, դուք չիմանաք ձեր լեզուն, եւ ձեզ որդի չեմ ճանաչի»:

Կամ՝ մի այլ նամակում. «Որդի՛ք, կրկնում եւ զգուշացնում եմ ձեզ, ազգով հայ էք. ոչ մի ժամանակ դուք չպիտի մոռանաք ձեր ազգը եւ լեզուն, որովհետեւ բնութեան եւ բարի ուսմունքների օրէնքով ամէն մարդ պիտի սիրէ իր ազգը եւ օգնէ նրա պայծառութեան: Ծճմարիտն ասած, ձեզ Եւրոպա ուղարկելու դիտաւորութիւններիցս մէկն էլ այն է, որ ջանաք իմաստուն լինել՝ ապագայում ձեր ազգին օգնելու համար: Եւ աղաչում եմ Աստծուն, որ պիտանի լինէք նրա ազատութեան՝ խօսքով կամ գործով»^{*)}:

Ամենից նշանաւոր եւ կարկառուն դէմքը հնդկահայութեան մէջ, որ իր ազգասիրութեամբը աչքի է ընկնում եւ Հայաստանի ազատագրութեան ազափարին շատ մեծ ծառայութիւն է մատուցել — Յակոբ Շահամիրեանն է:

ՅԱԿՈԲ ՇԱՀԱՄԻՐԵԱՆ

Ո՞վ էր Յ. Շահամիրեանը — շատ քիչ տեղեկութիւններ ունենք նրա կեանքի եւ գործունէութեան մասին: Միակ աղբիւրը, որ քիչ շատ ծանօթութիւն է տալիս մեզ նրա մասին՝ իր նամակներն են ու գրական երկերը, եւ առաջին հերթին՝ «Որոգայք Փառաց»ը:

Բնիկ Նոր-Ջուղայեցի էր, գաղթած Հնդկաստան: Ուերեմն, իսկական ծագումը Հին-Ջուղայից է, Երեւանեան նահանգի Նախիջեւանի գաւառից, որի մասին ինքը միշտ մի առանձին հպարտութեամբ եւ պարծանքով է յիշատակում. «Ի տանէն Նախիջեւանայ, ի 42-րդ աստիճան հիւսիսային կողմն յաշխարհէ, ի յոսս ծայրագոյն լեռն Մասիս»:

Հայրը՝ Շամիր Սուլթանում Շահամիրեան, եղբայրը, իրենից կրտսեր, Եղիազար: Դերձակ էր հայրը: Սկզբում պարսպում էր Մաղրասում իր արհեստով, բայց չուտով դեր-

ձակութիւնը ձգելով, զբաղում է մարգարտի առեւտրով եւ մեծ հաբստութիւն է դիզում — ինչպէս բոլոր հնդկահայ վաճառականները:

Մի հասարակ արհեստաւոր էր նա եւ հաւանաբար կիսազբաղէտ, ինչպէս սովորաբար բոլոր արհեստաւորները, մանաւանդ ա՛յն ժամանակներում: Սակայն նրա կենդանի եւ հարցասէր միտքը շատ բան է տեսնում եւ շատ բան սովորում իր շրջապատից: Անգլիական ազատաշունչ դադափարների ու թերեւս նաեւ Ամերիկայի ազատատենչ պայքարի ազդեցութեան տակ՝ նրա հոգում բռնկում է ջերմ ազգասիրութեան կրակը եւ նա ամբողջապէս անձնատուր է լինում իր հայրենիքի ազատագրութեան եւ լուսաւորութեան գործին:

Գաղափարի ժողովրդականացման եւ լայն ծաւալման համար հարկաւոր էր պրոպագանդ — խօսքի, մամուլի եւ ընդհանրապէս տպագրութեան միջոցով: Այդ նպատակով նա յղանում է մի գեղեցիկ միտք՝ հիմնել հայ տպարան Մաղրասում, որ այն պայմաններում կարող էր իսկապէս մի հրաշք համարուել, այն էլ Հնդկաստանի նման մի երկրում, ուր հայ տպարանի համար ոչ յարմարութիւններ կային, ոչ գործաւորներ, ոչ աշխատակիցներ:

Բայց նա այդ դժուարութիւնների առջեւ կանգ չի առնում. բաց է անում տպարանը (1772 թ.) իր որդի Յակոբի անունով եւ նրան է յանձնում ղեկավարութիւնը:

Յակոբը, Հայաստանի ազատագրութեան գաղափարին ծառայելու տեսակէտից՝ աւելի բախտաւոր էր, քան իր հայրը: Նախ՝ ծնունդ լինելով մի բարեկեցիկ առեւտրականի ընտանիքում, երկրորդ՝ լինելով պատանի — գուցէ նաեւ Հնդկաստանում ծնունդ — ուրեմն նա լիակատար հնարաւորութիւններ ունէր թերակրող լուսաւոր պայմաններում զարգանալու, հետեւապէս եւ աւելի օգտակար լինելու այն գաղափարին, որով այնքան տոգորուած էր Հնդկաստանի հայութիւնն ընդհանրապէս եւ իր հայրը մասնաւորապէս — հայրենիքի ազատագրութեան եւ բարձրացման գաղափարին:

Աչակերտում է Մովսէս Բաղրամեանին, որից հաւանաբար սովորում է հայերէն եւ հայոց պատմութիւն: Անշուշտ, նա չէր կարող չիմանալ նաեւ անգլիերէն լեզուն, մանաւանդ որ Հնդկաստանի հայ վաճառականները դրտ-

^{*)} Լէօ՝ «Հայկ. Տպագր. Բ.